Արձանագրություն թիվ 3

Նիստը կայացել է 2026թ. ապրիլի 6-ին:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էին «Գյումրու № 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը, «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենները, վարչատնտեսական մասի համակարգողներն ու հաշվապահները:

Օրակարգում՝

1. Կառավարման միասնական խորհրդի թիվ 3 նիստի օրակարգի հաստատման մասին (հաղորդող՝ Գ. Ավետիսյան)
2. Նախորդ (թիվ 2) նիստի որոշումների կատարման մասին (հաղորդող՝ Գ. Ավետիսյան)
3. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու №28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2026թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի նախագծի քննարկման մասին: (հաղորդող՝ դպրոցի հաշվապահներ)
4. «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու № 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաջին եռամսյակի ֆինանսատնտեսական գործունեության մասին 01.01.2026-01.04.2026թթ. ժամանակահատվածի համար (հաղորդող՝ վարչատնտես. համակարգողներ, հաշվապահներ, «Գյումրու № 28 հիմնական դպրոց» -ի տնօրեն)
5. Դպրոցի կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների հետ համակարգված աշխատանքների կատարման ապահովում (հաղորդող՝ «Գյումրու № 5 հիմնական դպրոց»-ի տնօրեն Մ. Մահակյան) :
6. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ,№28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2022-2027թթ. զարգացման ծրագրի 1(մեկ) տարվա արդյունքների հաշվետվություն: (հաղորդող՝ Մ.Ավ. Առաքելյան)
7. Այլ հարցեր:

Լսեցին 1՝

Կառավարման միասնական խորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը ներկայացրեց թիվ 3 հերթական նիստի օրակարգը:

Որոշեցին՝

Հաստատել միասնական խորհրդի 06.04.2026թ թիվ 3 նիստի օրակարգը:

Լսեցին 2՝

Նախորդ (թիվ 2) նիստի որոշումների կատարման մասին:

(հաղորդող՝ Գ. Ավետիսյան)

Որոշեցին՝

Հավանություն տալ նախորդ (թիվ 2) նիստի որոշումների կատարողականին, այն գնահատել բավարար և հաստատել:

Լսեցին 3՝

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու №28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահները քննարկման ներկայացրին 2026թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի նախագիծը 01.01.2026թ.-01.01.2027թ. ժամանակահատվածի համար:

Հաշվապահները ներկայացրին, որ նախահաշիվը կազմվել է ըստ եռամյակային համամասնությունների:

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով հաշվապահների կողմից ներկայացված հաղորդումը նախահաշվի նախագծի վերաբերյալ՝

Որոշեցին՝

Հավանություն տալ հաստատության 2026 թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի նախագծին՝ ըստ ցուցանիշների: Խորհրդի որոշումը սահմանված կարգի համաձայն ներկայացնել տարածքային կառավարման մարմին (ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ):

Լսեցին 4՝

Ներկայացվեց «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու № 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության առաջին եռամսյակի ֆինանսատնտեսական գործունեությունը 01.01.2026-01.04.2026թթ. ժամանակահատվածի համար:

Վարչատնտեսական համակարգողներն ու հաշվապահներն ընդգծեցին, որ դպրոցի ֆինանսական միջոցները տնօրինվել են նպատակային և խնայողաբար, տարեսկզբին հաստատված 3 /երեք/ ամիսների բյուջետային ծախսերի նախահաշվում, ըստ դրամարկղային ծախսի, գերածախս չկա:

Լսելով հաղորդումը՝

Որոշեցին՝

Հավանություն տալ 01.01.2026-01.04.2026թթ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությանը և ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ:

Լսեցին 5՝

: «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ս. Սահակյանը, անդրադառնալով դպրոցի կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների հետ համակարգված աշխատանքների կատարման ապահովմանը, նշեց, որ կարևոր է ընդլայնել կառավարման խորհրդի լիազորությունները, ունենալ իրավական ակտերի իմացություն ունեող խորհուրդ, ինչը կխթանի խորհրդի աշխատանքների արդյունավետությունը և որոշումների կայացման իրավական հիմնավորվածությունը: Ինչպես նաև նպաստել կառավարման խորհրդի անդամների իրազեկվածության բարձրացմանը՝ իրենց գործունեությունը կարգավորող իրավական ակտերի և դպրոցավարության վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմակերպել տարաբնույթ հանդիպումներ, քննարկումներ, սեմինարներ՝ ապահովելով բաց մասնակցային համագործակցությունը, արդյունավետ կառավարումը:

Որոշեցին՝

Ապահովել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը համադպրոցական բոլոր նախաձեռնություններում և աշխատանքներում:

Լսեցին 6՝

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու №28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2022-2027թթ զարգացման ծրագրի 1(մեկ) տարվա արդյունքների հաշվետվություն: (հաղորդող՝ Մ.Ավ. Առաքելյան)

Դպրոցի տնօրեն Մ. Ավ. Առաքելյանը, մանրամասն ներկայացրեց կատարված աշխատանքները, 2022-2027 թթ զարգացման ծրագրի մեկ տարվա արդյունքները.

1) Մանկավարժական աշխատողների նպատակային գործունեության խթանում և նախաձեռնությունների զարգացում (վերապատրաստում, ատեստավորում)
2) ԿԶՆԱԿ-ի հետ համագործակցություն (որպես կենտրոն դպրոց՝ մենթոր տնօրեն, մենթոր ուսուցիչներ)
3) Սովորողների հավասար մասնակցության հնարավորությունների ապահովում, համընդհանուր ներառականության ամրապնդում
4) Նախադպրոցական կրթության շարունակականության ապահովում

Նա նշեց, որ ՀՀ կառավարության կողմից իրականացվել է

*Դպրոցի շենքի և մարզահրապարակի հիմնավերանորոգում

*Խոհանոցային ժամանակակից գույքի և այլ պարագաների փոփոխում, նորացում

*Դպրոցական գույքի և տեխնիկայի փոփոխում, նորացում:

Հիմք ընդունելով տնօրենի հաղորդումը՝

Որոշեցին

Հավանություն տալ ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման ընթացքին և 1 (մեկ)տարվա հաշվետվությանը:

Միասնական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյանը հետաքրքրվեց նաև դպրոցներում կամավոր ատեստավորում անցած և տարակարգի դիմած ուսուցիչների տոկոսային հարաբերակցությամբ, կարևորեց տնօրենների կողմից տարվող աշխատանքը ուսուցիչներին խրախուսելու և ոգևորելու գործում, ինչը պիտի հանգեցնի ոչ միայն աշխատավարձի կտրուկ բարձրացմանը, այլև դպրոցներում ուսումնական որակի բարելավմանը:

Միասնական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան

Քարտուղար՝ Թ. Մկրտչյան

Անդամներ՝

Արմինե Մկոյան

Ռուզաննա Շահվալադյան

Սիդա Նալբանդյան

Էմմա Գրիգորյան

Քնարիկ Հարությունյան

Գայանե Մուրադյան

Լիլիթ Մաթևոսյան

Մանե Կարապետյան

Լիլիթ Սիմոնյան